

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԺԱՅԱՐԱՆԻ

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրաւորեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյս
Երզնայէմ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ռւսթաթեան ցառակ առամաղբու-
թեամբ Զերդ Ամենապատուութեան կը ներ-
կայացնելու ժառանգաւորաց Վարժարանի Կ-
Ընծայարանի ներկայ տարեկշիւանի գեղեկա-
գիրքը, տարուան պատկանելի հոգեւոր-
հայ: Ընծայարանը արարողը կը թիարանա-
կան իրենց զվարճ ստորագրաւ վեց ընծա-
յացունները աւելի պերճախօս իրականութիւն
մըն են քան վարչական այս տեղեկագիրը,
զոր կը ներկայացնենք Զերդ Հայրութեան:

Արդարեւ՝ երկար տարիներ ետ պէտք է
երթայ, թերեւ մինչեւ Զեր տնայութեան
օրերը, վերադառնելու համար նման ուրա-
խալի երեւոյթ եւ խոստմնալից սերդիւնք:

Ընծայարանի, եւ նսկէ առաջ ժառան-
գաւորացի ընթացքները յաջողութեամբ ան-
ւարտած քարէշորէ մեր սարկաւազները կը
ներկայացնենք Զերդ Ամենապատուութեան
խնդրելով որ յանձնէ իրենց Կրկայակման-
քը, արանց արժանի եզան բոլորն ալ իրենց
Յնաւարտութեամբ, բարի վարքով եւ քն-
նութիւններու յաջող արդիւնքով:

Ինչպէս քաջ ճափօթ է Զերդ Ամենապատ-
ուութեան, երեք տարիներ առաջ ուսումնա-
կան մեր ծրագրին մաս ըրինք երրայեցերէ-
նի ուսուցումը, իրեւ կարեւոր եւ անհրա-
ժեշտ լեզու մը: Ուրախ ենք յայտնելու որ
վեց մեր շրջանակարանները առաջին հուն-
քըն են այդ ծրագրին, եւ թէ իրենց այդ յա-

ւելեալ գիտութիւնը մեծապէս պիտի նպաս-
տէ բարձրագոյն ուսմանց հետեւելու իրենց
փափաքին իրագործման:

Մեր տարին անցաւ յարաբերաբար իս-
ղող եւ արդիւնաւոր: Ժառանգաւորաց Վար-
ժարանի եւ Ընծայարանի դասընթացները
շատարուեցան մեծ կանոնաւորութեամբ.
ուսուցչական կազմը նուիրուածութեամբ եւ
առանց որեւէ տկարացումի իրագործեց ու-
սումնական ծրագիրը:

Այս տարուան ընթացքին, ինչպէս ծրագ-
րած էինք երեք տարիներ առաջ, յատուկ
շեշտ մը դրուեցաւ անգլերէն լեզուի ուսուց-
ման վրայ, եւ ուրախ ենք Զերդ Ամենա-
պատուութեան յայտնելու թէ մեր ուսա-
նողները հրգիրդովսկան՝ որեւէ վարժարանի
պահանջներն չափով կը տիրապետեն անգլի-
տէն լեզուին, ինչ որ հր նպատակնք բացաւ-
նալ անհրաժեշտութիւն մը: Բարձրագոյն
ուսման ճշտող անաստութեան մը համար:

Խորհրդածայրակա՛ն նմանք Պ. Եւսյա տա-
րի բացառիկ կանոնաւորութեամբ հաղմա-
կեցութեանց աւ շնորհիւ Հոգը Ս. Արքան Արե-
ւայի ճիգերով, եւ առաջին անգամ ըլլա-
լով՝ ամենօրեայ եւ զարաթական մարզանք-
ներէն դաս ունեցանք Պատ. դաշտահանդէս
մը լման ծրագրով:

Կրօնական կեանքը եւ դաստիարակու-
թիւնը շարունակուեցան դասընթացներով,
ծրաւկաւարութեամբ եւ տուրք տուրեաց ծա-
ռայութեամբ: Կրնանք վստահեցնել Զերդ
Ամենապատուութիւնը թէ եկեղեցաւարու-
թիւնն ու բարեպաշտութիւնը զգալի մթնո-
յւրադ կը կազմեն մեր դպաստական կեան-
քին:

Այս տարեկիցների ուրախալի գլխածրու-
շաբլիկի յառույց հրեշտակալի գլխածրու-
շաբլիկի հիմնարկէն ժողովուրդային Վար-
ժապետի եւ Ընծայարանի շէնքի եւ Մարի-
Լիանովի տան շէնքի, որ կատարուեցաւ
բացառիկ շուրջ: Կը յաւանք 1972 թիւ
տեմբերին իսկ ուրախութեամբ եւ հրե-
շտակալի բացառիկ կատարելէ իսկ շէնքի, որ
անապատային տեղին շէնքի բացառիկ շու-
րջ շէնքի եւ կը կրթական այս հաստատու-
թեան իսկ:

Ուսանողական ներկայ տարեչրջանին,
մեր վարժարանը բաժնուած էր ժառանգա-
ւորացի, սրտ եւ Ընծայարանի երկու կար-
գերու :

Ընծալարանի Երրորդ եւ չբնականապէս զառարանը ունէր վեց սարկաւազ սաներ, որոնց մէջ ուսմանց առաջին կը Հանդիսանայ Բարեկնորհ Պոլոս Սարկաւազ Մանուկեան: Երկրորդ կը Հանդիսանայ Բարեչընորհ Վարդան Սարկաւազ Տատուրեան, եւ իւրերորդ՝ Բարեկնորհ Գրգրէյ Սարկաւազ Թաճեան:

**Հնժապարհի Առաջին կարգը ունէր վեց
ուրարակէր սանէր, որոնց մէջ առաջին ա-
ռաջինն էր Հանդիսահայ Տէրացու Սարգիս
Տառալարբեան։ Երկրորդ Տէրացու Ենովք
Չէքէնեան, իսկ երրորդ Տէրացու Յակոբ
Ռէստեմեան։**

Ժառանգաւորացի Զորքոյ դասարանը
ունէր տասն ուսանողներ, որոնց մէջ ա-
ռաւելին կը Հանդիսանայ Համբարձում Գա-
եան, երկրորդ Գրիգոր Աֆարեան եւ երրորդ
Աւետիս Ալթունեան:

ժառանգաւորացի երբորդ զաւարանը
 անէր տառ ռաւանդներ, որոնց մէջ առա-
 լին կը հանդիսանայ Հայկ Երկաթեան, երկ-
 րորդ Յարութիւն Աթէշեան եւ երբորդ Ա-
 լեքսան Կիրիդեան:

Ժառանգաւորաց Երկրորդ զաւարանը
ունէր եօթ աւանդներ, որոնց մէջ առաջին
էր Հանդիսանան Սկսբ Գալէնտէրեան եւ
Օննիկ Քէրզեան, իսկ երրորդ Յակոբ Տուր-
աւանան:

Ժառանգաւորաց Աւանդին դառարանը ու
նէր. ստաններէ Եւսանողներ, որոնց մէջ ա-

ասլին կը հանդիսանայ Հրանդ Կիւմէնեան,
Երկրորդ Արման Էջիբեան եւ Երրորդ Յակոբ
Հէրիէլեան:

Վարդի ժէջ Զորքորդ դասարանէն առաջ-
նութիւն կը շահին Գրիգոր Աֆարեան եւ
Համբարձում Գալթեան Երրորդ դասարանէն
Մուրաթ Էօզեան եւ Առաջին դասարանէն
Թորոս Սողեան: Իսկ Վարժարանի վար-
չի բարձրագոյն նշիչ եւնի Երկրորդ դասա-
րանի սան Սերոբ Գալէնտէրեան:

Հայերեն լեզուի մէջ առաջնութիւն կը չափին Ընծալարանի Երբորդ դասարանէն Պօղոս Սրկ- Մանուկեան, Ընծալարանի Առաջին դասարանէն Տրց- Գէորդ Աղամեան, Զորբորդ դասարանէն Աւետիս Աթոռեան, Երբորդ դասարանէն Հայկ Երկաթեան, Երկրորդ դասարանէն Սերոբ Գալէնտէրեան, Կոռնելի դասարանէն Հրանդ Կիւզէնեան եւ Յակոբ Հէրկէլեան :

Անդերբին լեզուի մէջ աստօնաբանն ևր
շահին Ընծայարանի Երբորդ կարգէն Պօղոս
Սրկ. Մանուկեանն և Վարդան Սրկ. Տա-
առեառն, Ընծայարանի Առաջին կարգին
Տրց. Յակոբ Ռիւսաւէմեան, Զորբորդ զառ-
բանէն Աւետիս Ալթունեան և Համբարձում
Պաշեան, Երբորդ զառբանէն Գաբրիէլի
Սէթեան և Հայկ Երկաթեան, Երկրորդ զա-
ռաբանէն Սեդրո Գալէնաբեառն, Առաջին
զառաբանէն Հրանդ Կիւլէնեան և Յակոբ
Հէրիշեան:

Արտաբերէն չեղութի մէջ առաջադասութիւն կը շահին Չորրորդ դասարանէն Աւետիս Աբ- թունեան եւ Համբարձում Պալեան, Երրորդ դասարանէն Յովհաննէս Պատմանեան, Երկ- րորդ դասարանէն Օննիկ Թէրզեան եւ Սե- րգոյ Չալէսեաներեան, Առաջին դասարանէն Արամ Պալեան:

Երբայեղէն լեզուի ժէջ առաջնութիւն
կը շահին Ընծայարանի Երբորդ կարգին
Վարդան Սրկ - Տառուբեան, Ընծայարանի
Մասին կարգէն Տըց - Գեորգ Այաժեան:

Մեր հակիրճ այս աեղեկագիրը ամբողջական չըլլար էՔէ չիշէնք նաև մխիթարական այն երեւոյթը զոր կը ներկայացնեն Ս. Թարգմանչաց Վարժարան յաճախող Տասուրեան մեր սաները: Եկած այստեղ մենք

մասամբ առանց որևէ ծանոթութեան հայերէն լիւրտի, անոնցմէ շատեր տաբեկեղջին խլեցին առաջին տեղերը իրենց դասարաններուն եւ բերին այնպիսի արդիւնքներ որոնք պիտի ուրախացնեն ամէն Հայու սիրտ: Այս առթիւ մեր յատուկ շնորհակալութեան խօսքը կ'ուղենք ուղղել բոլոր այն բարեբարներուն, որոնք իրենց մեծ ու փոքր նրաւիրատուութիւններով օժանդակեցին ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի նոր ծրագիրներու իրագործումին, — բայց յատկապէս Պարոն Տատուր Տատուրեանին, որուն անունը կը կրէ մաս մը ամբողջութեամբ մեր հաստատութենէն, ի նշան երախտագիտութեան այդ մեծ Հայու բարոյական եւ նիւթական սքանչելի օժանդակութեան:

Կ'ուղենք փակել մեր տեղեկագիրը լաւատե՛ս այն մաղթանքով, որ Ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը զաւիթ տարիներուն շարունակէն հասցնել ու պատուատել աւելի ու աւելի մեծ թիւով ուխտեալ եկեղեցականներ՝ շնորհիւ Ձերդ Ամենաշուքատուութեան Հայրական խնամքին եւ բարձր հովանաւորութեան, որով ոչ միայն կը կերակրէ յատուկ դուրդուրանքով մեր կրթական կեանքը, այլ յանձն կ'առնէք Ձեր թանկագին ժամերէն տրամադրել ուսուցչութեան, որպէսզի Ձեր անմիջական շունչին եւ ներշնչումին մէջ պատրաստուին Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երիտաւարդ սերունդները:

Մատչելով ի Համբոյր Ձեր Ս. Աջոյն

Մնամ

Խոնարհ որդի

ՇԱՀԷ ԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ

Վերատեսուչ

24 Յուլիս 1971